Կարգապահական գործ թիվ ԿԳ-14159

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի ապրիլի 9-ի թիվ 74-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/53-Ա

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ԺՈՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԵՎ ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Երվանդ Վարոսյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Տիգրան Խուրշուդյանի, Լուսինե Սահակյանի, Ալեքսանդր Սիրունյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբաններ Ժորա Խաչատրյանին (արտոնագիր թիվ 44) և Էդգար Հովհաննիսյանին (արտոնագիր թիվ 1129) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դ.Գրիգորյանի կողմից թիվ ՍԴ3/0101/01/14 քրեական գործով 23.10.2014թ. որոշում է կայացվել §Կարգապահական վարույթ հարուցելու համար ՀՀ փաստաբանական պալատ դիմելու մասին¦:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

21.11.2014թ. ՀՀ Փաստաբանների պալատի նախագահի թիվ 402-Ա/ԿԳ-14159 որոշմամբ փաստաբաններ Ժորա Խաչատրյանի (արտոնագիր թիվ 44) և Էդգար Հովհաննիսյանի (արտոնագիր թիվ 1129) նկատմամբ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4-րդ գլխի 4.1 կետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ (թիվ ԿԳ-14159): Կարգապահական գործը

հանձնվել է կարգապահական գործ նախապատրաստող փաստաբան Տիգրան Մուրադյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դ. Գրիգորյանի թիվ ՍԴ3/0101/01/14 քրեական գործով կայացրած 23.10.2014թ. որոշումով, պատճառաբանելով, որ փաստաբաններ Ժորա Խաչատրյանը և Էդգար Հովհաննիսյանն առանց նախագահող դատավորի թույլտվության ինքնակամ լքել են դատական նիստերի դահլիճը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, նույն հոդվածի 7-րդ մասը, 313-րդ հոդվածը, դիմել է ՀՀ փաստաբանների պալատ փաստաբաններ Ժորա Խաչատրյանի և Էդգար Հովհաննիսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման, ինչպես նաև Պալատի խորհրդում կարգապահական գործի քննության ընթացքում Դիմողը որևէ մասնակցություն չի ունեցել:

3.2. <u>Պատասխանողների համառոտ բացատրությունները.</u>

Կարգապահական վարույթի նախապատրաստման ընթացքում փաստաբաններ Ժորա Խաչատրյան ու Էդգար Հովհաննիսյանը բացատրություններ չեն ներկայացրել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում, նախապատրաստող Տ. Մուրադյանը ներկայացրել է եզրակացություն, համաձայն որի. «Գտնում եմ, որ սույն կարգապահական գործի լուծման համար էական նշանակություն ունի այն հարցը, թե ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դ. Գրիգորյանի «Կարգապահական վարույթ հարուցելու համար ՀՀ փաստաբանական պալատ դիմելու մասին¦ 23.10.2014թ. որոշումը կայացվել է դատական նիստում, թե ոչ:

Ինչպես երևում է դատական նիստի ձայնային արձանագրությունից դատական նիստում դատարանի կողմից առանձին որոշում չի կայացվել փաստաբաններ Ժորա Խաչատրյանի և Էդգար Հովհաննիսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար ՀՀ փաստաբանների պալատ դիմելու մասին, մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածի 7-րդ մաս պահանջից հետևում է, որ առանձին որոշումը պետք է կայացվեր դատական նիստում:

Թեև «Կարգապահական վարույթ հարուցելու համար ՀՀ փաստաբանական պալատ դիմելու մասին» 23.10.2014թ. որոշման մեջ վկայակոչվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածի 7-րդ մասը, սակայն գտնում եմ, որ այդ նորմի պահանջը չի պահպանվել, քանի որ «Կարգապահական վարույթ հարուցելու համար ՀՀ փաստաբանական պալատ դիմելու մասին» 23.10.2014թ. որոշումը դատական նիստում չի կայացվել:

«Կարգապահական վարույթ հարուցելու համար ՀՀ փաստաբանական պալատ դիմելու մասին՝ 23.10.2014թ. որոշման բովանդակությունից կարելի է ենթադրել, որ այն կայացվել է դատական նիստում, սակայն դատական նիստի ձայնային արձանագրությունից հետևում է, որ դատական նիստում դատավոր Գրիգորյանի կողմից կայացվել է միայն արձանագրային որոշում փաստաբաններ Ժորա Խաչատրյանի և Էդգար Հովհաննիսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար ՀՀ փաստաբանների պալատ դիմելու մասին:

Դատական նիստում կայացված արձանագրային որոշման և «Կարգապահական վարույթ հարուցելու համար ՀՀ փաստաբանական պալատ դիմելու մասին» 23.10.2014թ. առանձին որոշման համադրումից հետևում է, որ դրանց բովանդակություններում առկա են էական տարբերություններ:

«Կարգապահական վարույթ հարուցելու համար ՀՀ փաստաբանական պալատ դիմելու մասին» 23.10.2014թ. որոշմամբ պատճառաբանվել է, որ պաշտպաններն անհարգելի չկատարելով իրենց դատավարական պարտականությունները, չունենալով դատական նիստի դահլիճից հեռանալու որևէ դատավարական իրավունք և չենթարկվելով դատական նիստը նախագահող դատավորի օրինական կարգադրությանը, ինքնակամ լքել են դատական նիստերի դահլիճը, չեն կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի պահանջները և խախտել են փաստաբանի վարքագծի կանոնները, ինչի հետևանքով խախտվել է նիստի բնականոն ընթացքը:

Ինչպես երևում է դատական նիստի ձայնային արձանագրությունից դատական նիստում կայացված արձանագրային որոշումը բոլորովին այլ պատճառաբանություն է ունեցել: Թեև այն վերը նշված է, սակայն կրկին անգամ մեջբերում եմ.

«Դատարանը երբևէ չի խոչընդոտել պաշտպաններին դատական քննությանը մասնակցելու առումով, դատարանը փաստում է, որ պաշտպաններ Խաչատրյանը և Հովսեփյանը առանց նախագահողի թույլտվության լքել են դատական նիստերի դահլիճը, դատարանը փաստում է, որ նրանց լիազորությունները որևէ կերպով դադարեցված չի եղել, պաշտպանական իրավունքի առումով, այսինքն պայմանագրային առումով դադարեցում չի եղել, ամբաստանյալը չի հրաժարվել պաշտպաններից, նման պայմաններում դատարանը որոշում է պաշտպանների նկատմամբ՝ Խաչատրյանի և Հովհաննիսյանի, կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածով նախատեսված սանկցիա, այն է՝ կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությամբ դիմել ՀՀ փաստաբանների պալատ, դատական նիստը հայտարարվում է փակված»:

«Կարգապահական վարույթ հարուցելու համար ՀՀ փաստաբանական պալատ դիմելու մասին՝ 23.10.2014թ. որոշման պատճառաբանությունը, որ պաշտպաններ Խաչատրյանը և Հովհաննիսյանը չեն ենթարկվելով դատական նիստը նախագահող դատավորի օրինական կարգադրությանը, այնքան էլ հասկանալի չէ, քանի որ ինչպես երևում է դատական նիստի ձայնային արձանագրությունից նախագահող դատավորի կողմից այդ կապակցությամբ կարգադրություն չի կատարվել:

Այն պատճառաբանությունը, թե խախտվել է նիստի բնականոն ընթացքը, նույնպես չի համապատասխանում դատական նիստի ձայնային արձանագրությանը, քանի որ ինչպես երևում է արձանագրությունից՝ ամբաստանյալ Հովսեփյանին նիստերի դահլիճից 12 ժամով հեռացնելուց, իսկ այնուհետև վերջինիս պաշտպաններ Խաչատրյանի և Հովհաննիսյանի կողմից նիստերի դահլիճն ինքնակամ լքելուց հետո, առանց նրանց մասնակցության շարունակվել է գործի բնականոն ընթացքը, դատարանը հարցեր է ուղղել հարցաքննվող վկային, այլ վկաների է հարցաքննել, հրապարակել է վերջիններիս նախաքննական ցուցմունքները, քննել և որոշում է կայացրել մյուս ամբաստանյալի պաշտպանի միջնորդության վերաբերյալ:

Ելնելով նշվածից, հիմք ընդունելով, որ «Կարգապահական վարույթ հարուցելու համար ՀՀ փաստաբանական պալատ դիմելու մասին՝ 23.10.2014թ. առանձին որոշումը դատական նիստում չի կայացվել, գտնում եմ, որ հիմնավորված չէ փաստաբաններ Ժորա Խաչատրյանին (արտոնագիր 44) և Էդգար Հովհաննիսյանին (արտոնագիր 1129) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը, փաստաբաններ Ժորա Խաչատրյանը և Էդգար Հովհաննիսյանը պատասխանատվության ենթակա չեն»:

Կարգապահական գործը խորհրդին է հանձնվել 30.01.2015թ.:

Սույն կարգապահական գործով Պալատի խորհուրդը գումարել է նիստ՝ 09.04.2015թ.:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդը հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ՍԴ3/0101/01/13 քրեական գործով փաստաբաններ Ժորա Խաչատրյանը և Էդգար Հովհաննիսյանը ներգրավված են որպես ամբաստանյալ Է.Հովսեփյանի պաշտպաններ:
2. Նշված քրեական գործով 23.10.2014թ. տեղի ունեցած դատական նիստի ընթացքում դատարանը դատական սանկցիա է կիրառել ամբաստանյալ Է.Հովսեփյանի նկատմամբ և վերջինիս հեռացրել է դատարանի դահլիճից:
3. Դատարանի կողմից նման սանկցիա կիրառելուց հետո դատական նիստերի դահլիճը թողել են նաև ամբաստանյալի պաշտպաններ Ժորա Խաչատրյանը և Էդգար Հովհաննիսյանը:

4. Դատական նիստում դատավոր Գրիգորյանի կողմից կայացվել է արձանագրային որոշում փաստաբաններ Ժորա Խաչատրյանի և Էդգար Հովհաննիսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար ՀՀ փաստաբանների պալատ դիմելու մասին:
5. Դատական նիստում դատարանի կողմից առանձին որոշում չի կայացվել փաստաբաններ Ժորա Խաչատրյանի և Էդգար Հովհաննիսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար ՀՀ փաստաբանների պալատ դիմելու մասին:
6. Դատական նիստում կայացված արձանագրային որոշման և «Կարգապահական վարույթ հարուցելու համար ՀՀ փաստաբանական պալատ դիմելու մասին» 23.10.2014թ. առանձին որոշման համադրումից հետևում է, որ դրանց բովանդակություններում առկա են էական տարբերություններ:

Շարադրված փաստերը հիմնավորվել են հետևյալ ապացույցներով.

1. Թիվ ՍԴ3/0101/01/13 քրեական գործով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում 23.10.2014թ. տեղի ունեցած դատական նիստի ձայնային արձանագրությունը:
2. ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դ.Գրիգորյանի կողմից 23.10.2014թ. կայացված որոշումը «Կարգապահական վարույթ հարուցելու համար ՀՀ փաստաբանական պալատ դիմելու մասին»:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված 09.04.2015թ. թիվ ԸԴՂ/ԿԳ220-15 տեղեկանքի համաձայն փաստաբան Ժորա Խաչատրյանի (արտոնագիր թիվ 44, ստացված 03.19.1999թ.) նկատմամբ 2006-2015թթ. ժամանակահատվածում այլ կարգապահական վարույթ չի հարուցվել:

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված 09.04.2015թ. թիվ ԸԴՂ/ԿԳ/219-15 տեղեկանքի համաձայն փաստաբան Էդգար Արամի Հովհաննիսյանի (արտոնագիր թիվ 1129, ստացված 16.10.2010թ.) նկատմամբ 2010-2015թթ. ժամանակահատվածում այլ կարգապահական վարույթ չի հարուցվել:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբաններ Ժորա Խաչատրյանի և Էդգար Հովհաննիսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը 2014 թվականի հոկտեմբերի 23-ին տեղի ունեցած դատական նիստի ընթացքում, չպահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերի և 314[1]-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները, ամբաստանյալի պաշտպաններ Ժորա Խաչատրյանի և Էդգար Հովհաննիսյանի նկատմամբ դատական սանկցիա՝ «Փաստաբանին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով ՀՀ փաստաբանական պալատ դիմելու մասին» նույն դատական նիստում, խորհրդակցական սենյակում առանձին փաստաթղթի ձևով շարադրված առանձին որոշում չի կայացրել և չի հրապարակել:

ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 7-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314[1] հոդվածի 7-րդ մասերի համաձայն՝ *գործի քննությանը մասնակցող դատախազի և գործի քննությանը որպես կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ կարող են կիրառվել սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված սանկցիաները:* ***<u>Գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելն իրականացվում է նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշմամբ:</u>*** *Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դատական սանկցիան պարտադիր հիմք է դատախազի կամ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:*

Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314[1]-րդ հոդվածի 7-րդ մասը փաստաբանի նկատմամբ սանկցիա կիրառելու համար նախատեսում է երեք պահանջ՝

1. Դատարանը սանկցիա կիրառելու մասին որոշումը պետք է կայացնի **նույն դատական նիստում,**
2. Դատարանը սանկցիա կիրառելու մասին պետք է կայացնի **առանձին որոշում՝** կոնկրետ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար ՀՀ փաստաբանների պալատ դիմելու մասին**,**
3. Դատարանը պետք է **դիմի ՀՀ փաստաբանների պալատին**՝ իր կողմից կայացրած **առանձին** որոշումը ՀՀ փաստաբանների պալատին հանձնելու միջոցով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 313-րդ հոդվածի համաձայն՝

1. Այն բոլոր հարցերի առթիվ, որոնք լուծվում են դատարանի կողմից դատական քննության ժամանակ, դատարանը որոշումներ է կայացնում:

2. Գործը լրացուցիչ քննության ուղարկելու, կարճելու կամ կասեցնելու, խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու, բացարկների, փորձաքննություն նշանակելու մասին որոշումները դատարանը կայացնում է **<u>խորհրդակցական սենյակում</u> և դրանք պետք է շարադրված լինեն առանձին փաստաթղթերի ձևով՝** ստորագրված դատարանի ամբողջ կազմի կողմից:

3. Մյուս բոլոր որոշումները դատարանի հայեցողությամբ կարող են կայացվել կամ վերոհիշյալ կարգով, կամ տեղում դատավորների խորհրդակցելուց հետո՝ որոշումը մտցնելով դատական նիստի արձանագրության մեջ:

4. Դատական քննության ժամանակ դատարանի կայացրած որոշումները հրապարակվում են:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ «*Փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում՝ երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը*», իսկ Կանոնակարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի «2-րդ կետի համաձայն՝ «Պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը. »:

Վերը նշվածից ելնելով Պալատի խորհուրդը չի անդրադառնում փաստաբաններ Ժորա Խաչատրյանի և Էդգար Հովհաննիսյանի գործողությունների իրավաչափությանը:

Պալատի խորհուրդը նշված հարցի վերաբերյալ «Փաստաբան Հովիկ Արսենյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» 2007 թվականի հունիսի 7-ի № 9/1-Ա, «Փաստաբան Վարդան Սաֆարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» 2007 թվականի հունիսի 28-ի № 10/13-Ա, «Փաստաբաններ Դիանա Գրիգորյանի, Արթուր Գրիգորյանի և Արա Զաքարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 29.08.08. թիվ 14/14 որոշումը վերացնելու հարցի քննարկման մասին» 2008 թվականի սեպտեմբերի 26-ի №18/5-Ա, «Փաստաբան Կ.Գրիգորյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին (ԿԳ-09031)» 2010 թվականի փետրվարի 18-ի № 4/2-Ա, «Փաստաբան Կրոմվել Գրիգորյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին (ԿԳ-09034)» 2010 թվականի փետրվարի 25-ի №5/2-Ա, «Փաստաբաններ Լուսինե Գրիգորյանին, Վաղարշակ Գևորգյանին, Անահիտ Ավետիսյանին, Ռուբեն Ռշտունուն և Համլետ Մկրտչյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» 2011 թվականի ապրիլի 4-ի № 7/10-Ա, «Փաստաբան Անի Թորոսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» 2011 թվականի մարտի 3-ի №5/1-Ա, «Փաստաբան Վահագն Բաբայանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» 2011 թվականի հունիսի 1-ի № 11/3-Ա և «Փաստաբան Հրանտ Գևորգյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» 2012 թվականի հուլիսի 23-ի № 8-ԿԳ/1-Ա որոշումներով նման իրավիճակներում կարճել է կարգապահական վարույթները, քանի որ բացակայել է դատական սանկցիան՝ նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշումը՝ Պալատ դիմելու մասին:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի,

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբաններ Ժորա Խաչատրյանի (արտոնագիր թիվ 44) և Էդգար Հովհաննիսյանի (արտոնագիր թիվ 1129) նկատմամբ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4-րդ գլխի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը չհիմնավորված լինելու հիմքով:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբաններ Ժորա Խաչատրյանին, Էդգար Հովհաննիսյանին և դիմողին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

Նիստը նախագահող՝ Երվանդ Վարոսյան